

ԽՈՐՃՐԴԱՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՅԱՐՁԱՆՆԵՐԸ

II

ԳԱՐՆԻ—ԳԵՂԱՐԴ

(ՈՒՂԵՑՈՒՑՑ—ԱՌԱԽ)

---

ИСТОРИЧЕСКИЕ ПАМЯТНИКИ Арм. ССР

II

ГАРНИ—ГЕГАРД



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՀ ՀՈԼԴԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԵՎԱՏՅԱՆ Ա. 1

302.6(47.325)

ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈԼԾԱՐՉԱՆՆԵՐԸ

II


ԳԱՐՆԻ—ԳԵՂԱՐԴ

(ՈՒՂԵՑՈՒՅՑ—ԱԼԲՈՒ)

Հ  
500  
Տ

ИСТОРИЧЕСКИЕ ПАМЯТНИКИ  
АРМЯНСКОЙ ССР  
ГАРНИ—ГЕГАРД

II



Պատ. Խմբաղյա՞ն Ա. ՊՈՐԴԱՎԱՆ  
Վ. Երևանիկ, սրբագր. Ռ. ՏՈՒՅԱԿԻՆ  
Լուսովելպատճենակ սմէր ԱՄՏ. «ՎԻՃԱՐ»

Պահամախռութամի  
Տպարան  
Կյավիլ № 5 3501  
Պատվեր № 212  
Տիրան 1000  
▽

Gərni Keçərt Tarixi Abidələri

**LES MONUMENTS HISTORIQUES  
DE GARNI-GUÉGHARD**

## ԲՈՎԱՆԴԻՌԿԱԲՈՒՀՆ

Ել

1. Գեղարդավանքի պատմական անցյալը . . . . .	7
2. Դեղի Գեղարդավանքը հուշարձանները տանող ձևագրահները . . . . .	9
3. Գեղարդավանքի հուշարձանները . . . . .	11
ա) Վանակինք . . . . .	11
բ) Գեղարդի վանք . . . . .	13
գ) Հոգված Թոռ . . . . .	20
դ) Գալերի նույնականիներ . . . . .	2
4. Ալբոմ	
5. Գեղարդավանքի հաղիստական քարտեզը	

---

## СОДЕРЖАНИЕ

### Исторические памятники «Гарни—Гегард»

Стр.

1. Из прошлого истории Гегарда . . . . .	37
2. Дороги, ведущие к памятникам Гегарда . . . . .	7
3. Памятники Гегарда . . . . .	9
ա) Ванапա . . . . .	9
բ) Гегардский монастырь . . . . .	9
գ) Азуц—Тар . . . . .	2
դ) Памятники Гарни . . . . .	2
4. Альбом	
5. Археологическая карта Гегарда	

---

## M Y N D Ə R I Ç Ə S I

1. Kəşərt dərəsinin tarixi keçmişindən . . . . .	34
2. Kəşərt dərəsi abidələrinə gedən Jollar . . . . .	34

3. Keqart dərəsi abidalar	35
a. Visaplar	35
b. Keqart monastırı	36
ç. Havuts Tar	38
c. Qərnı abidələri	39
4. Albom va Keqart dərəstulin arxeologija qartası	

---

### T A B L E   D E S   M A T I È R E S

<i>Les monuments historiques de Garni-Guéghard</i>	<i>Page</i>
1. Passé historique de Guéghardatzor	40
2. Les chemins menant vers les monuments de Guéghardatzor	40
3. Les monuments de Guéghardatzor	42
4. Les monuments se trouvant à l'intérieur des murailles Havoutz-Tar „Aménaprkitch“	43
5. Les monuments de Gar	46
a. Les Vichaps	42
b. Guégharda-vank (monastère de Guéghard)	42
6. Album	
7. La carte archéologique de Guéghardatzor	

## ԳԵՂԱՐԴԱՁՈՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՑԱԼԻՑ

Գեղարդաձորը հսում մանում եր պատմական Հայաստանի Այրարարաւ նահանգի Մազազ գավառի մեջ Մազազ գավառը կազմված եր Աղատ գետից հովտից, ոկտած նրա տկունքներից մինչև Արաքսին խառնվելը:

Այս գավառը ընտական և վարչական տեսակետից բաժանված էր յերկու մասի. Գառնիից վերև, Աղատի ջորս վտակների ձորահայտներից մինչև Գեղամա լեռները կազմում եր գավառի լեռնային մասը, իսկ Գառնիից ներքև, մինչև Արաքս՝ դաշտային մասը: Մազազ գավառի այս զաշտային մասը պատմական Հայաստանի սիրտն և յեղեր. այսուղ եյին անեղավորքած Հայաստանի յերկու նշանավոր առևտրաշահ քաղաքները՝ Արտաշատը և Դիլինը, վորոնց ափերակները դաշտում են Ղամարլուի շրջանում: Գավառի լեռնային մասը, ինչպես այդ մայրաքաղաքներին, այնպես ել զաշտային ամրող մասին մատակարարում եր խմելու և վոռոգելու ջուր՝ թե Աղատ գետի և թե նրանից հանգած բազմաթիվ առուների միջացուք: Մյուս կազմից՝ զաշտային մասի համար նա հոմնդիսանում եր ամսուանոց, Ամսովա շոգերին Աղատի անտառապատ և հարուստ արոտավայրերն եր բարձրանում զաշտավայրի բնակչությունն իր անաստճներով, իսկ Գառնի զյուղի ստուրակ աղբյուրները, գեղատեսիլ ձորը և անմատչելի բերդը մեծ ու փոքր փեռդախների սիրած ամսուանոցն եյին:

Ներքին, զաշտային մասը վարչականորեն կապված եր մայրաքագների հետ և հաճախ Դիլինի գտիտու կամ Վաստան եր կոչվում, իսկ վերին մասում՝ բուն Մազապում հնագույն ժամանակներից սկսում եր Մազապնունի կոչված նախարարական (Փեղագալական) տոհմը, մի փոփրիկ իշխանություն, վորը Թագավորի բանակին տալիս եր ընդամենը 100 զինվոր:

XII դարից սկսած՝ Առզագ գավառը և Մազաղնունիք նախարարները գագարում են Հիշատակվել պատմության մեջ։ Գավառի այդ վերին մասն սկսած և կոչվել Գոռնօս գովառ, յերբեմն ել մտնում և Կոտայք գավառի մեջ (ինչպես և այժմ՝ նրա մի մասը՝ Գառնին, Գեղարդաձորով մտնում և Կոտայքի շրջանի մեջ), իսկ այնուհետև այդ գայրերն անցնում են այլ Գեղարդական մների ձեռքը—սկզբում Զաքարյանների, ապա, XIII դարում՝ Պողյանների։

---

## ԴԵՊԻ ԳԵՂԱՐԴԱՁՈՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Գեղարդաձորում կամ հուշարձանների չորս նշանավոր խմբեր՝  
ա) Դառնի գյուղում գտնվող խումբը, բ) Գեղարդավանքի խում-  
բը, զ) Հավուց Թառի կամ Ամենափրկիչ վանքի խումբը և դ) Վիշտապների խումբը:

Դեպի այս հուշարձանները և ընդհանրապես գեղի Գեղար-  
դաձոր տանող բոլոր ճանապարհներն անպայմանորեն անցնում  
են Գառնիով:

Յերեանից գեղի Գեղարդաձոր տանող յերկու ճանապարհ  
կա, վորոնցից մեկն աստիճանաբար գաւառում և հիմնական։  
Ա. ՃԱՆԱՊԱՐՀՆ. — Այս ճանապարհը Յերեանից սովորական  
խճուղով բարձրանում և մինչև Քանաքեռ։ Քանաքեռից մի սայլ-  
ուղի թեքվելով դեպի հարավ-արևելք՝ Ավան, Զրվեժ, Վողջա-  
րեղ և Թարփիչյու գյուղերի մոտով հասնում և Գառնի և այն-  
տեղից թեքվելով դեպի հյուսիսարևելք, անցնում և Դողթ գյուղի  
վերեկի լինարանջով, ապա բաժանվում և Արթիզ գյուղը տանող  
ընդհանուր ճանապարհից դեպի աջ, դեպի զետի ձորը և լինար-  
անջի վոլորտապույտ ճանապարհով հասնում և ուղիղ Գեղարդ։  
Այս ճանապարհն ամենաբարեկարգն է, դրանով ավտոմեքենանե-  
րը, կառքերը և սայլերն ամենայն հեշտությամբ գնում են մինչև  
Գեղարդ։

Զիով կամ փոտքով այս ճանապարհով գնալու գեղքում  
պետք և հետևյալ շեղումները կատարել վորոնք կարճացնում են  
ուղին։ Յերեանից բարձրանալ ուղղակի նորք, բռնել Զրվեժ  
գյուղի ուղղությունը և հենց Զրվեժի տակ միանալ Քանաքեռից  
յեկող ընդհանուր ճանապարհին և հասնել մինչև Գառնի։ Գառ-  
նիից Գեղարդ շարունակել ընդհանուր ուղին և դեռ Դողթ գյու-  
ղին հասած՝ բաժանվել և բռնել աջ, դեպի ձորն իջեցնող սւզ-  
դությունը և մանել Գողթ գյուղը։ Գողթի միջով բարձրանալ

և միանուալ ուզիք Գեղարդ տանող ճանապարհին, Նկարագրված ճանապարհի յերկարությունը մեքենայի կամ սայլի ընթացքով մինչև Դառնի ՅՀ կիլոմետր ե, իսկ վոտքի կամ ձիու ընթացքով՝ 27. Դառնիից մինչև Գեղարդ ընդամենը 7 կիլոմետր ե, վորի համարյա կեսին Գողթ ոյտուն ե:

Բ. ԱՌԱԿՊԱՐՆ.— Այս ճանապարհն սկսվում է Յերեանի հառ կառակ ծայրից, կայարանի կողմից, անցնում և թոփմախոն լին մոտով, համառև Շոռազրյուր գյուղը, գյուղի մոտ բարձրանալով մի գծվար վերելք՝ համառև և Աղջալար դյուղը և դեռ Դառնի չհասած՝ միանում և Ա. ճանապարհին։ Այս ճանապարհը նույնութեան սայլուղի յե, բայց Շոռազրյուրի մոտի վերելքը բավական գծվարին և ձիասայլի համար, գերազանելի յե յեղան սայլը վոտքով կամ ձիու վերալու դեպքում Ա. ճանապարհից ավելի կարճ եւ:

Այդ յերկու ճանապարհներից բացի կա նաև յերրորդը, բայց առաջին յերկուսից ավելի յերկար մի ճանապարհ։ դա անցնում և Ղամարլու անող խճանզավ և Աղբաշ գյուղի մոտ փոխվելով սայլուղու, թերվում և դեպի հյուսիս ու ձորի միջով բարձրանում դեպի Դառնի։ Այս ճանապարհն ազատ կերպով կարելի յն գնալ ավատակենայավ և կառքով, վոտքով դնարու համար շատ յերկար եւ:

#### ՀԱՅՈՒՅԹ ԹԱՅԻ (Ամենափրկչի) ՃԱՆԱԿԱՐՀԸ

Դառնիից մի կածան իշնում և ուղղակի ձորը, ուր Գեղարդի գետակի վրա ձգված և մի բարեշնն կամուրջ, վորից անցնելով՝ կածանը բարձրանում և դետի ձախափնյա լանջերի թուփ ու մացափի, յերրեմինի խիտ անտափ մնացրդների միջով և համառև ուղղակի վանքը՝ Յ—4 կիլոմետր յերկարություն ունեցող այս լեռնային ճանապարհը, չնայած անընդհատ վերելքին, մեծ բառ վականություն և պատճառում ուղեռին զրջապատի բնության գեղեցիկ ու հետաքրքիր յերևույթներով և դեպի Արարատյան դաշտը բացվող ընդարձակ անսարանով։

Վանքից կարելի յե ուղղակի Գեղարդ դնալ. պետք և իշնել Գողթ գյուղի վրա, ուր գետակի վրա կա փայտաշեն կտմուրջ, ապա դետի աջ ափով բարձրանալ դեպի վեր՝ դեպի Գեղարդը, Դառնիից սկսած՝ այս ամբողջ ուղին միայն վոտքով կամ ձիով կարելի յե գնալ.

Դեպի հուշարձանների այս խումբը տանող ճանապարհն սկսվելով Գեղարդ տանող ընդհանուր ճանապարհն էվ, թողնում և Գեղարդը աջ կողմամբ, ձարձրմիջում և բարձրանալով համեմում և Արթիղ գյուղը և շարժանակում և զեզի Բայազետ տանող ճանապարհն քարձրանալ վեր՝ ախքան, մինչև վոր հավասարվում և Գեղարդամորին, ապա թեքվելով դեպի աջ, անցնում և Գեղարդամորի և դեռակի հանդիպակաց ափը և համեմում Դաստարքենդ կոչվող սրատեղը Այս բոլոր ժամանակ ունենալով հյուսիս-արևելք ուղղություն՝ ձիով մատ յերեք ժամվա ճանապարհ և ապա թեքվել պետք և դեպի հարավ-արևելք և մեկ ժամ ևս անցնելով սքանչելի արտաների միջոց՝ համեմում եք Խանգարված լինը՝ Խախմախան զյոլը կամ Վանը վալը: Վիշապների մի խումբ ընկած և հնաց այս լին ափերին, յերկրորդ խումբը դանավամ և 2-3 կիլոմետր դեպ հյուսիս, Ամդանա յուրդ կոչված որտանում և մի խումբ ել գետի արևելք, Խերցգելի գյուղի կողմերում: Դեպի հուշարձանների այս խումբը կարելի յեր բարձրանալ վոտքով նաև Գեղարդից՝ ձորամիջով:

## ԳԵՂԱՐԴԱՎԱՐԱՆՆԵՐԻ

## 1. Վ. Խ Շ Ա Պ Ն Ե Ր

Ազատ զետի ակունքների շրջակայքում, Գեղամա լեռների բարձր վեշիրում, այստեղ, ուր ամառվա կեսերին զեռ փայլում և սպիտակ ձյունը և բազմաթիվ սառնորակ աղբյուրներ գոյացնում, վորմաք հոսում են ալպյան ծաղկալից արտավայրերի միջով, պառկած ևն այդ քարե հակաները՝ ընդամենը 23 հատ:

Ե՞նչ են յեղել այս հուշարձանները Անագին մեծության կարծը, բազմալու քարի այս անձանան բեկորներ են դրանք, վորմաք հայտառանի հնագույն բնակիչների կողմից յենթարկվել են հասուակ ձեմավորման: Վիշապները յերկու հիմնական ձև ունեն՝ ձկան ձիի, վորմաց ամրող մարմինը, նաև գլուխը մշակված և նմաննցված են կամ հաստագուխ սոմա և կամ սըագլուխ ճանար ձկների: Շատ հաճախ չեն մոռացվել նաև կողքերի լողաթաղանթները: Յերկրորդ տեսակը կոթողներ են, շինված նույնապես բազալտի մեծամեծ կը տորներից: զիսի տեղը մշակված և ախալես, վոր կարենք յեզան մաշկ և զցված կախ ընկած վասներով և նույն մաշկի վրայի ամբող-

ջական զլիսով։ Այս յեղագլուխ կտմ ցըրդուխ կոթողների կենտրոնական մասներում կրկին քանդակված կան յեզան գլուխներ, կամ զույգ թռչունների՝ արտպիցների նկարներ (ալլում նկարներ 1, 2, 3, 4)։ Այս հուշարձաններին տեղական ժողովուրդը պիտօք և անվանում (ազրբեջանցինները՝ տօդանա, վոր գարճյալ վիշտապ և նշանակում)։ միայն մեծության պատճառով չեն սրանց վիտապ անունը՝ հին ժամանակներում Հայաստանում վիշտապ հյիմն կոչում նաև մեծ ձկներին, իսկ հետագայում՝ նաև մեծ ոձերին։ Վորովհետեւ այս հուշարձանները շատ հիմն են, մաս 3000 տարվա պատմություն ունեն ու բրենց ձեռվ ել ձկան նման են, դրան համար ել հենց այդ հիմն անվանումը մնացել է մինչև այժմ։

Վիշտապները տարբեր մեծություն ունեն։ ամենամեծն ունի 4 և մ 75 ոմ յերկարություն և 55 ոմ լայնություն։ յեթե նկատի ունենանք և այն, վոր զրանք լավացին ծագում ունեցող կարծը և ծանր քարեր են, ապա պարզ կլինի, թե ինչու միջնազարյան հատարակության համար դրանց մշտկումը և տեղափոխումն այդ գժվարին ըստնային բարձրությունների վրա կարող եր ովհապային թվաբ Սակայն միայն ձեռն ու մեծությունը չեն, վոր այդ հուշարձաններին վիշտով անունն և ամել։ իրենց բովանդակությամբ և նշանակությամբ այդ հուշարձանները լիովին համերաշխավում են ձկան ձեռներուն ու միանալու համարական ըստն չայստանիք բնուկչության ջրի աստվածներն են, կանոնինեցված աղբյուրների, արևեստական առուների, լճերի ափերին և ջրբաժան կետերում ծունական կարգերով ապրող հատարակությունն այդ ձկան կերպարանքով հուշարձանները կանգնեցնում եր իր տրու հանդին ջուր պարզելող կետերում վարպես ջրի աստվածներ, վորպես տարբեր առուների վրա այս ու այն առնմի ունեցած իրավունքի հակիչներ։ Գեղամա ըստների վրայի աղբյուրների ջրերը, ինչպիս և հալվող ձյան ջրերը հավաքվում եյին արևեստական լճի մեջ և առուն ամիսներին արևեստական առուներով բաշխվում առանձին առնմերի միջն Առուներից յուրաքանչյուրի մոտ առվել տեր տոնմը կանոննեցնում եր իր ջրի աստված ձկանը՝ վիշտապին և վիշտապ կոթողներին, վորոնց վրա քանդակում եր իր տոնմի աստղերուն՝ առանձին՝ յեզան, թռչունների կամ այլ նշանով։

Հետագա ժամանակներում, յերբ Մարզագ գավառում սկսեցին հիմնվել առաջ Արտաշատ (Ա գար մեր թվ. առաջ) և հետո Դվին քաղաքները, գարեր առաջ տոնմերի կառուցած վոսովման ցանցը վճռ միայն չկորցրեց իր նշանակությունը, այլև նորոգվեց

ու կատարելագործվեց։ Ազատ գետի ակունքների (վեշապների) մոտ նորոգվեց ու մեծացվեց առնմերի լիճը և վերածվեց մի հոկայական ջրամբարի, վորս ամփոփում եր իր մեջ ջրի մեծ պաշարները։ ամսան առաջ ամիսներին, յերբ Ազատ գետի ջրերը չելին բառվականացնում դաշտային մասի արտ ու անդաստանին, բացվում եր այդ ջրամբարի ընթանը և կենսատու հեղուկն Ազատի հունավ հոսում եր դաշտերն ու վուզում պատակած արտերը։ Այդ լիճն այժմ անվանվում է Թախմախտան վլա և հենց դրա ափերին ել պառկած և պիշտապների մի մեծ խումբ։

Անցյալ դարի 80-ական թվականներին Գեղարդի վանահայրերից մեջը փորձեց վերանորոգել Թոխմախտան լիճը և ոպտագործել վանքի շրջապատի հողերի վուզավան համար, բայց հաջողություն չունեցավ։ Այժմ Հողմողկոմատի Զրտնահոսության որակարգում դրված և Թախմախտան ճի ոգատագործման խնդիրը։

Վեշապների—ջրի պաշտամունքի հետ սերտարեն կապված և նաև Գեղարդի վանքը։

## 2. Գ Ե Պ Ա Ր Դ Դ Ի Վ Ա Ն Ք Ը

Այս հուշարձանը հոսում կոչվում եր Այրից վանք—այրերի վանք, միայն XIII դարից հետո գործածական և գառնում Գեղարդի վանք անունը։ Գեղարդ՝ նշանակում ե նիկակ, վանքն այդ անունով և սկսում կոչվել, վորովհետեւ հողերականները, շահագործելով ժողովրդի ազիտառաթյունը, տարածում եյին, թե իրը այն նիկակի ծայրը, վորով ծակել են Քրիստոսի կողը, պահպամ և այդտեղ։

Այրիվանքի անունը շատ հին եւ Այս անունը ծագում և այն բանից, վոր վանքի շինությունները ինչպես հոսում, նույնպես և այժմ մեծ մասամբ շինված են բնական այրերի մեջ։ Այս այրերի որբավայր գառնալը կապված ե գեռ նախաքրիստոնեյական հավատալիքների հետ, տոհմատիրական հասարակակարգի՝ ջրի պաշտամունքի—վեշապների հետ։ Թեև հետագա շինարարություններն այդ պաշտամունքին վերաբերող շատ բան փշացրել են, բայց ամենակարևորը վճէ միայն չի փշացվել այլև քրիստոնյա վարդապետների կողմից ոգտագործվել և վորպես մասսային շահագործելու միջոց։ դա այսպես կոչված տառքը աղբյուրնեւ, վորը բղիսում և ժայռափոր յեկեղեցիներից մեկում և վորի ջրերն իրը թե «հրաշագործ զորություն» են ունեցել հավատացյալների համար՝ բոլոր հիվանդությունների դեպքում։

Արար գետի ակունքների մաս կանգնած են Հեթանոսական շրջանի ջրի առաված վիշտապնիրը, իսկ ներքեւում, նույն գետի ափերին յեղած ուրբազնու ջրի ազրյուրը վարդապետները դարձրել ելին վաճառքի առարկան:

Գեղարվավանքի մասին մեր ունեցած պատմուկան տեղեկությունները հասնում են մինչև IV դարը. առկայն այդ էին շնոքերից տեղում վույինչ շի մասցել. ներկա բոլոր շնոքերը պատկանում են XIII—XIII դարերին. դրանցից որրասաւշ քարելով շնոքածները մի քանի անգամ նորոգման են յենթարկվել, ինչպես որինակ, 1670 և 1840 թվականների յերկրաշարժների պատճառած ավերներից հետո:

ԱՍՏՈՒԵՇՆՈՐԾԻՆ. ԵԵՍ ՊԱՌԱ ԽԵԿԱՆ, ՎԱՍԻՆ ՎԱՐԴԻՆ, ԱԶՅՈՎ ԽԱՂԲԱԿԻՑԱՆ ԳՆԵՑԻ [այս] ԵԵՐԿՐԻ ՏՄՐԵՐԻՑ ՍՈՒՐԲԻ ՈՒԵՑ ԱՅՐԻՎԱՆ-ՔԸ ԼԵՇՈՆԵՐՈՎ ԵԵՎ ԴԱՇՏԵՐՈՎ. ԵԵՎ ՎԱՆՔԻ ՄԵՋ ԵԵՂՈՂ ԲՈԼՈՐ ՍՄՐԴ ՈՒ ԿԱՐԺՈՎ. ԱՅԼ ԵԵՎ ԱՎԵԼԱՑԱՑՐԻ ՎԱՆԿԻ ԵԵՎ. ԱՐԵԱԲԻ ԽԱԶԵՐ ԵԵՎ. ՊԱՎԱՐԱՆՆԵՐ, ՍԵԽՆԵՆԵՐ ԵԵՎ. ԱՌԻՎԱՑՈՒՆԵՐ ԵԵԼ ԳԵՇՈՑՆԵՐ ԵԵՎ. ԵԱԽԵՂԵՑԻՆԵՐ ԵԵՎ. ԿԱՆՅԱՆԵՑՐԻ ՍՈՒՐԲ ՆԵԱՆՆԵՐ [Խամարել] ԵԵՎ. ՀԱՐԴԱՐԵՑԻ ԳԵՐՋՄԱՆԱՏՈՒՆ ՀԱՎԱՑԻՆԱԿԱՆ ԻՆԱ ԵԵՎ. ԻՄ ՏՈՒՄԻ ՀԱՄԱՐ ԵԵՎ. ՏՈՒ Ի ՈՒՏԱԳՈՐԾՈՒԵՑՈՒՆ ՎԱՆՔԻ ԻՄ ՀԱՎԱՆ ԳԵՂՋԱԲԵՐ ԵԵՎ. ԱԵՐԻՎԱՋ ԳԵՇՈՒԵՐԸ. ԵԵՎ ՏԱՄՈ ՀԱԶԱՐ ՍԳԻՏԱՆ [արծար դրամ]. ԻՆԿ ԵԵԹԵՆ ԻՄ ՏՈՒՄԻ ԵԵՎ ԿԱՄ ՈՏԱՄ [Թիկը] ԻՄ ՀՈԽԿՈՎ ԿԱԼՎԱԾՈՆՆԵՐԸ ԱՅՍ ԱՐՐԵՐԻՑ [վաճականներից] ՎԵՐԾՆԵԼ ԶԱՆԱ ՎՈՐԵԼԻԵՑ ՊԱՏԱԽՈՎ. ԵԵՎ. ԿՈՄ ԻՄ ԱՆԴԱՐԸ [նվերը] ԱՅԼ ՏՈՒՄ ԵԵՏ ՎԵՐՃՆԵ, ԱՑՆՎԻՍԻՆ ՀԱՆՎԻ [արխայաբաններից] ԱԱՏ-ՆՈ ԵԵՎ. ԲԱԺԱՆՎԻ [վարդի] ՍՈՒՐԲ ՀԱՎԱՑԹ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... ԵԵՎ ՀՈՒՆՈՅԸ ԲԱԺԻՆ [բառանություններից] ՎԱՆՔԻ ..... ՍԱՀԱՄՆԵ-ԱՆՔ ..... ԱՆՉԻՆ ԱՐՋԱՆԱԳԻՆ ..... ԼԵԱՏԱԿ ՄԵՇ ՊԱՐՈՒ ՊԻՌԵՐՆ ՆՐԱ ԶԱՐՄԻՆ ԵԻ ԶԱՎԱԿԱՆԵՐԻՆ ՀԱՎԱՏՅԱՆ Ի ԲՎԻՆ. ԶԼՅ=1283.

Հուշարձանների զիխավոր խումբը չորս կողմից ՄՀԱՎԱՄ-Ված և բարձր պարսպով, վորը տեղանեղ ունի բուրդեր. զիխա-վոր մուտքն արևմայան կողմից և. արևմայան կողմից նույնպես կա մուտք. իսկ հյուսիսային կողմինը քարով շարված և (ալլում նկ. 5, 6, 7).

Ա. ԽԵԱՎՈՐ ՀՈՒՆՈՅԸ. — Սա որրասաւշ քարով շինված մի-

մեծ յեկեղեցի յեւ, խաչաձև հաստակագծով. չորս անկյուններուած ունի յերկշարկանի խորաններ. համաշափ և բարձր դմբեթի կենտրոնում և աստծու բարձրաքանզակն եւ, վորի մոտից բաժանվում է ութ կամարներով, յուրաքանչյուրի մեջ միամի նեղ լուսամուտ Դմբեթը բանազ վորմասայտների խոյակների վրա քանդակված են, կախած դիրքով; դինու կամ ջրի պուլիկները Բեմի կիսակամար մուտքը բաժանված է 12 կամարներով:

Հուշարձանն ունի յերկու մուտք, հարավային մուտքի շրջանակը դրսի կողմից ամրողնովին քանդակագրդ եւ, զիսավոր զարդն այստեղ նուռն և և խազողը Մուտքից վեր կա մի գեղեցիկ բարձրաքանդակ, ուր առյուծն առջնի վուներով ցատկել է յուրի մեջին և կրծում և նրա թիկունքը, Յերկրորդ մուտքն արեմուտքից և և բացվում և գավթի մեջ. այս մուտքի շրջանակը նույնպես զարդաքանդակ եւ, այստեղ նույնպես քանդակված կան պուլիկներ. այս մուտքի ճակատին եւ գրված հուշարձանի շինության թվականը՝ ԱԿԴ (1215 թ.), Խվանե և Զաքարի իշխանների որոք:

Ահա այդ արձանագրության թարգմանությունը.

ԹԱՎԱՎՈՐՈՎՆ ԶԱՐԱՐԻԱՅԻ, ԻՐԱ ՀԱՐԱՑԱՏ ԻՎԱՆԵՑԻ ՅԵՒ ՆՐԱՆՑ  
ՎՈՐԴԻՆԵՐ ՇԱՀՆԵՐԱԿԻ, ԱՎԱԳԻ ՈՒ ՎԱՆՔԻ ԱՌԱԳՆՈՐԴ ԲԱՐՍԵՆ  
ՄԻԱՑԱԿՑԱՑԻ ԺԱՄԱՆԱԿ ԵՒՆՎԵՑԱՎ. ՄԵԽԱՓԱՌ ԿԱՔՊԴԱԿԵՆ  
[յեկեղեցին] ԹՎՅՆ ԱԿԴ—1215.

Հուշարձանի թի ներսի և թի դրսի պատերին կան XIII—XIX դարերին վերաբերող բազմաթիվ կարեռոր արձանագրություններ. Այս հուշարձանը շատ ուշագրավ է նրանով, վոր թեև XIII դարի սկզբին և շինված, բայց իր վոնի և քանդակների մեջ մեծ չափերով մտել են X—XI դարերի ճարտարապետության տարրեր (ալբում նկ. 8, 9, 10):

Բ. ԳԱՎԻՐԻ ԿԱՄ ԺԱՄԱՏՈՒՆ. — Ճարտարապետական այս վիթխարի կառուցվածքը յեկեղեցու արևմտյան կողմն եւ. մեջտեղում ունի 4 հաստ և գեղեցիկ սյուներ, վորոնց վրա հանդշում են առաստաղի կամարները, մեջանդում մի յերդիկանման լայն անցք՝ և աւալակտիտային՝ գեղեցիկ զարդաքանդակներով և շարվածքով. Առաստաղի կողքերի մասերը հարթ են և տարրեր գույնի քարերից մեծ վարպետությամբ շարված մողայիկի. Արևելյան պատի անկյուններում կան յերկշարկանի խորաններ:

Նման մեծ գավիթներ Հայաստանում սկսեցին շինել հառակապես XIII դարում. որտեղ հետաքրքիր են նրանով, վոր կիսաբանիկ օհնից են. գավիթներում եյին ևեղի ունենում նաստառկական մեծ նավազույթներ (ժաղավներ, դատեր և այլն). անենալով այսպիսի նպատակ, իրենց ձևով ել նրանք վոչ թէ յեկեղեցիներին եյին նմանեցվում, այլ զյուղական մեծ սներին: Մեջտեղում 4 ոյուն և առաստաղի կիսակամարի կենարունում մեծ յերգիկ, դրսից ել միանգամայն գյուղական տան տեսք (ալրում, նկ. 11, 12).

Գավթի արեւելյան պատճի առակ (ներսից), զեսպի զըմավոր հուշարձանը տանող մուտքի յերկու կողմերում, պատվանդանների վրա, կանգնած են յերկու խաչքարեր. Հարավայինն ավելի մեծ և զեղաքանգակ, Հայաստանի այս տիպի լավագույն հուշարձաններից մեկը, շինուած 1213 թվին. Միիթար հորինողի (քանդակող վարպետ) ձեռքով, (ալրում նկ. 13). Հյուսիսային կողմին ավելի փոքր և և շինված և 1351 թվին:

Գավթի հարավային պատճին (զբուից), լուսամուռների կողքերին կան հետաքրքիր բարձրաքանգակներ, Մուտքն արեւմտյան կողմից և, մուտքի նակատի քարը (բարագոր) անի գեղեցիկ քանդակներ (ալրում նկ. 11):

Գ. ԱՐԱՎՈՐՈՐ ՀՅԻՆԱՐՁԱՆՆԵՐ.—Վորքան ել ճարտարապետական և զեղարվեստական արժեք ունենան Գեղարդի զըմավոր հուշարձանն ու. գավթիթը, այնուամենայնիվ Գեղարդի—վորքն Հայաստանի պատճական, արվեստի մի կարևոր կոթողի—հոչակը կադմիլ և քարափոր հուշարձանների շնորհիվ, վորոնք ներկայացնում են առանձին-առանձին տաճարներ. Հայաստանում ուրիշ տեղեր ել կան քարափոր շենքեր, բայց վոչ մեկը դրանցից չունի Գեղարդի կատարելությունը:

Վոչ միայն պարսպից գուրք, այլև վանքի բակում գտնված ժամանակ, զուք չեք նկատում այս նաշակավոր հուշարձանները. ձեր տուած Ա. և Բ. հուշարձանների յիշուը բարձրանում են լերկ, տոխրագույն ժայռեր: Մեծ Գավթի (†) հյուսիսային պատը միակտուր մայր ե, վորի մեջ վորված կան յերկու դռներ. մանենք դրանցից նախ արեւմտյանով:

Հ. ԱՐԱՋԻՆ ՔԱՐԱՓՈՐ ՀՈՒՇԱՐՁԱՆ. — Բացված տեսաբանն առաջին հերթին շնորհում ե մարգու. ձեր չորս կողմը մի միակտուր ամբողջություն ե, վորի վերեկից. չգիտես թէ վորտեղից, թափանցում ե լույսի մի խուրճ: Վորքան այդ մայուարեկորը դըրսից տձեւ ու անհապույր ե, նույնքան ներսից սրբատաշ ու գե-

դապարդ և Բնական տձեւ վիճակածքի վրա մարզկային աշխատանքը դրել և իր անջինջ կնիքը, և ստեղծվել և արվեստի այս հոյակապ կոթողը։ Տաղանդավոր արվեստագիտ ճարտարապետը չի մռացել նույն իր անունը գրաշաբեկ յուր իսկ ստեղծագործած հուշարձանի վրա։ Հուշարձանի բարձր գմբեթի տակ, հայկական արվեստի սիրած նանազարդերի յերիշի վրա, արեւելան կողմում, մեծ առանձինով գրած և — ԶՎԱՐԴՊՍ ԳԱԼՁԱԴ ՅԻՇԵՑՔ։ Այդ վարպետը (Նույն վարդպետ եյին կոչվում) Գալճագն և՝ հին քարափորների կերպուր։

Այս հուշարձանի տեղը հառամ, հավանաբար, յեղել և բնական փոքր այր, վորի միջի և սրբազնութեա ազրյուրը պաշտպնդ և վիշտապնդերի հետ պոհմատիրական—նախաքրիստոնեական ժամանակ (ալրում նկ. 14, 15)։

Հուշարձանի գմբեթը բարձրանում է ութ վորմեասյուների վրա, վորմոց կամարները խաչաձևում, հասառամ, անցնում են իրարուս, ճարտարապետական մի ընտիր վոճ, վորմնույնպես Գալճագի տաղանդի մի փայտուն նմաւշ և (այդ վոճը ներկայումս հաստակ ուսումնասիրության առարկա յի ալրում նկ. 16, 17), վեճմափորի պատեմը զարդարված են դեղեցիկ քանդակներով, և վորապրված կան շատ արձանապրություններ, հարավային պատի վրա վորապրված և XIII գարում Գեղարդում շինարարություններ կատարած Պառշի հետեւյալ արձանապրությունը (ալրում նկ. 18)։

Ի ԵԵՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՎԱԾ, ԱՍՏՎԱՆԱՍՄՐ ԲԱՌԱԴՐԻՆ ՎՐԱՑ ԱՎԱ-  
ԴԻՆ ԵԵՎ ՇԱՇՆԵԱԽՆ ԵԵՎ ՆՈՐԱ ՎՈՐԴԻ ԶԱԲԱՐԻԱՑԻ ԵԵՍ, ՊՈՌԵ,  
ՎՈՐԴԻ ՎԱՍՎԱՐ ԱԱՂԱՋԻՑԱՆ ԱԶԴԻՆՑ ԹԱԶԱՐԻՆ ԱՐԻ [զինցի] ԱՑԱ  
ԵԵՐԿՐԻ ԵԵՐԵՐԻՑ ՄԻՇԱՅՐԱԿ ԱԵՐԻՎԱՆՔԸ, ԼԵՇՆԵՐՈՎ, ԵԵՎ ԴԱՇԵ-  
ՐՈՎ ԵԵՎ ԱՄԵՆ ՍԱՐԳ ՈՒ ԿԱՐԳՈՎ, ՎՈՐ ԿԱՐ ՆՐԱ ՄԵԶ, ՓՈՐԵՑԻ ՎԻՄԵ-  
ՏՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՒ [բարի մեջ յեկեղեցի] ՀՐԵԱՏԱԿ ԻՇ ԵԵՎ ԻՄ ՎՈՐԴԻՆԵ-  
ՐԻ ԵԵՎ ԻՄ ԱՍՈՒԽԻՆ ԽՈՒԹՈՒ ԱԱՄՈՒՆՆԻՆ.

2. ԵԵՐԿՐՈՐԴ ՔԱՐԱՓՈՐ ՀՈՒՇԱՐՉԱՆ. — Նույն մեծ դավթի (Բ) հյուսիսային պատի արեւելյան ծայրից մի դուռ ել տանում և զետի Գեղարդի բոլոր քարափորների գլուխ գործոց այս հուշարձանը Այս քարափորը բաժանված է յերկու մասի՝ բուն յեկեղեցի և դավթի. Դուք մանում եք նախ գավիթը, ուր ձեր հայացքն անմիջապես մեխվում ե դիմացի պատին՝ խոշոր բարձրաքանզակների վրա. վերևում մի յեղան գլուխ է, վորի բերանից կախ ե ըն-

կած շղթա. շղթայի յերկու ծայրերն անցնում են իրար դիմաց կանգնած զույգ առյուծների վզերին, վորոնցից յած մի թևատարած արծիվ ճանկերով բռնած ունի գառը. Եղթայլած ասյուծները Պոլշյան նախարարական տան զինանշանն են (գերը), իսկ արծիվը ժամանակի ֆեռազաների սիրած մոտիվն ե (ալրում նկ. 10). Գավթի արևելյան պատին մի խաչ և քանդակված, իսկ դեպի բռն յեկեղեցին առնող մուտքի կամարի անկյուններում՝ յերկու մարդկային բարձրաքանդակները. Գավթի մեծությունն ե հարավից - հյուսիսից 8 մ 20 ոմ և արևելքից - արևմուտք՝ 6 մ 2 ոմ.

Յերբ զուք մտնում եք բռն հուշարձանը, ձեզ զգում եք բոլորովին լեռան սիրտը թափանցած և դրսի ձայներին անհաղորդ, բայց բավական և մի փաքրիկ շշուկ ձեր կողմից, վոր ամբողջ լեռը թնդա արձագանքից, Արաքափոր արվեստի այս ամենամեծ կոթողն իր նախարապետական բարձր վոնավ և զեզարվեստական հարգարումով բացատիկ հուշարձան է:

Այս հուշարձանն ունի բարձր ներքին գմբեթ, վորի թմրուկը բաժանված և ներքուստ 12 մասերի՝ զեղեցիկ կամարներով:

Կամարների վերեի մասերը, գմբեթի կարսնիզը և բոլոր համար տեղերը զարդարված են բռնական և յերկրաչափական զեղեցիկ քանդակներով, վորոնց ծայրերը վերջանում են նոնազարդով, Բեմի կիսակամար պատը բաժանված և կամարներով ինն մասերի. Բեմի աջ և ձախ կողմերում խորաններն են. խորանների և բեմի միջև ընկնող տարածության վրա գտնվում են բարձրաքանդակներ, մի մեծ խաչ, վորի թների տակին կանգնած են յերկու մարդ - մեկի ձեռքն նիզակ, իսկ մյուսի ձեռքն զուրդ և բերանին՝ ռազմի շեփոր. Բեմի ճակատին մի գեղեցիկ քարայծ և քանդակված վոստը բերանին (ալրում նկ. 20, 21):

Հուշարձանի մեծությունն ե արևելքից-արևմուտք 8 մ. 40 ոմ և հյուսիսից-հարավ 6 մ. 70 ոմ.

3. ԱՆՐԻՌՐԴ ՔԱՐԱՓՈՐ ՀՈՒՇԱՐՁԱՆ (Տապանատուն). — Մեծ զավթի արևմտյան մուտքի դիմացից քարե աստիճանները տանում են դեպի վերի վիմափորները. Այդուղի, աջ կողմում, լիսան մեջ յերմում և մի նեղ ու յերկար քարափոր միջանցք՝ 9 մ 65 ոմ յերկարությամբ և 2 մ 85 ոմ լայնությամբ. միջանցքի վերջում, դեպի աջ բացվում է մի դուռ, վորը ձեղ տանում և Պոռշի վորդի Պապաքի և իր ամուսին Ըստովորանի շինել տված տապանատունը. Այս տապանատունն իր մի ծայրավ գտնվում է յերկրորդ

քարափոր հուշարձանի սրահի վրա,ուր և անկյունից կամի անցք՝ հաղորդակցության համար:

Պատրաժի տապանատունը Գեղարդի ամենամեծ քարափորն եւ արևելքից-արևմուռոք 18 մ 5 ու և հյուսիսից-հարավ՝ 18 մ 3 ու։ Տապանատունը շինված և գավթի վոնով, կենտրոնում կան և հաստակեղույս սյուներ, գլխուրին՝ քանդակագորդ մեծ խոյակների Այսուների կենտրոնում քարձրանում եւ կիսագմբեթը, մեջտեղում մեծ յերդիկի Հատակին կան մի քանի տապանաքարեր։ Երիսության 1288 թվի արձանադրությունը գտնվում և հարավարեւելյան սյուն խոյակի և սյան կլոր մակերեսի վրա։ Այս շենքը հետաքրքիր և վորպես ժայռափաց արվեստի ամենամեծ կառուցում և զյուղական աների իր նմանազարյանք (ալբոմ նկ. 22)։

Բացի նկարագրվածներից, պարսպի ներսում կան ելի բազմաթիվ մանր քարափոր շենքեր, ինչպես որինակ՝ հենց մեծ գավթի կոտորի կողքի մատուռները, մեծ յեկեղեցու արևելյան կողմում յերկնարկանի մատուռները և այլն։

Դ. ՇՄԱՐԻ ՔԱՂԱՔ. — Գեղարդավանք մտնելու համար անքից մաս 300 մետր հեռավորության վրա պետք է անցնել նեղ կիրճով, վորը կոչվում է Կապտն։

Կապանից մինչև վանք ձախ կողմի ժայռերի մեջ անվերջ յերեվուու են արենտական մուտքեր, պատուհաններ և խորություններ. զբանք մեծ ու փոքր բնակարաններ են, յերբեմն այնպիսի բարձրության վրա, վորտեղ բարձրանալը խիստ վտանգավոր է, սակայն այդ բնակատեղիներն ավելի հեռուներն ել են ձգվում, վանքի յետևում, նրա դիմոցը—հանքային ջրի մոտ, զետք ձախ ափին՝ անմասաչելի տեղում մի քանի սենյակներ իրարու մեջ գտնվում են «Թյոռողլու» այրը և ուրիշները։ Այնքան շատ են քարափոր բնակարանները, վոր պատմագիրներից մեկը «Վիմե քաղաք» (քարե քաղաք) և կոչում այս վայրը՝ Յեղ իրոք, շատ և պատճեն պատմության ընթացքում՝ թշնամիներից հալածական շրջապատճ բնակչությունը յերկար ժամանակ թափնվել և այս «քարե քաղաքում»։ Այդպես պատճեց վերջին անգամ Շահ-Արասի որոք։

Այս վեմի քաղաքում ե տպրել և ստեղծագործել XIII դարի հայ մատենագիրներից մեկը՝ Միկիթար Այրիվանեցին, Այրիվանեցին դրել և «Ժամանակագրություն», «Ժառընտիր» և այլ յերկեր։ Այսուինք միշնագարյան այդ գրականագետի բնակարանը։

Վանքի արևելյան մուտքից դուրս գալով, ըրջելով նաև հյու-

սիսային պարխողը, բարձրանում եք միշտ զեզի վեր, մի նեղ կածան, մեկ կիրամետրից ավելի ձեզ ուղեկցելուց հետո, մոտեցնում եք մի քարափոր մուտքի, մանում եք՝ ավերակներ, յերկարաշրժից փրփել և քարափոր շնչթի մի մասը. այսուղի, անկյունում, շեն և մասցել մի փոքրիկ քարափոր մատուռ, վորի հյուսիսային պատին, դրսից, Այրիվանեցու մեծ արձանագրությունն է.

Ի ՓԱՌՍ ՔՈ ԳՐԻՍՈՍ ԱՍՏՎԱԾ ՄԵՐ ՑԵՎ Ի ԶՔԱԽԲՈՒՆ ՀՊԴԱՅՑ  
ԱՐԲՈ. ԹԿԱ ԱՋՁԱՄԵԴ ՄԻՒԽԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒՆԵՑ ԱՑՍ ԱՆԱՊԱՏ;  
ՑԵՎ ԴԱՐՁՐԻ ՖԱՄԱՏՈՒՆ ԽԱՂԱՂ ԱՇՈՐՔԻ ՎԱՐ ՑԵՎ ԲՆԱԿԵՑԻ  
ԱՑՍԵԴ ՀԱՍՑԱՏԵԼՈՎ 24 ԿԱՆՈՒՆԱՐ, ՎՈՐՈՎՏԻՑ 9-Ը ԸՆԹԵՐՑՎԱԾՄ  
ԿԱՄ ՀՈԴԵԱՀ ԽՈԽԹԵՐ, ԱԴԱՉՈՒՄ ԵՄ ԲՈԼՈՐԻՆ ՀԵՏԵԼ ՄԵԶ ԳՐԻ-  
ՑՈՒԽ ԱՌԱՋ. ՆՈՒՑՆՊԵՍ ՑԵՎ ՄԱՐ ԻՇԵԱՆ ՊՈՅԵՒՆ ՑԵՎ ՆՐԱ ՈՐՀՆՑԱՅ.  
ԶԱՎԱԿԻՆ. 1289 ԲՎՆ. ՍԿԱՍԵ ՀԱՑ ԳՐԻՑ 862. Ս. ԳՐԻԴՈՐԻՑ 965  
ԳՐԻՍՈՍԻ ԽՆՆԴԻՑ 1291. ԱԴԱՄԻՑ 8433. ՓՈՐ ԽՎԻՑ 206... 157  
ՏԱՐՈՒՑ ՄԻՆՉԵՎ ԱՇԽԱՐԴԻ ՎԵՐՁԸ. ԿՐՈԴ ՏԻՐԱՑՈՒԻՆ ՀԵՏԵԱՅԻ Ի  
ԳՐԻՍՈՍԻ.

Պարսպի արհմայան մուտքի դիմաց, զեզի հյուսիս - արե-  
մուտք, մեծ բնական այբբի զիմաց և գտնվում ս. Աստվածածին կի-  
սապիմափոր յերկնարկ հուշարձանը, վորի պահերին կան XII  
դարի արձանագրություններ և խաչքարեր (ալբոմ նկ. 23):

Դեղաբազմանքը Հուշարձանների Պահպանության կամբայիլ կողմից բա-  
րեկարգվել և վեր և աեցնել սրբնակելի տուրքատական վայրի. կոն կոնուգրգու-  
նենյոկներ և հարմարություն:

Ա. Հ. Ա. Ա. Ա. Ա. Թ. Ա. Ա. (Ամենափրկիլի)

Գեղարդաձորի հուշարձանների այս յերրորդ խումբը տեղա-  
գործած է Ազատ զետի ձախ ափին, մի բարձր սարանարթի վրա և  
յերեսում և ձորի բոլոր ծայրերից՝ և Պատճիբից, և Գեղարդից, Հու-  
շարձանն այժմ մի ավերակակույտ եւ վանքն այդ անունով և կոչ-  
վում, վորովինետե հնում նրա կողքին այդ անունով դյուղ կար:

Այս հուշարձաններ աեցում հնում յեկեղեցի յեւ յեղեւ վորը  
քանդվել և XI դարի սկզբին. 1013 թվին Գրիգոր Մագիստրոսը  
նորն և շինել և կալվածները նվիրել նրան:

Հուշարձանների գլխավոր խումբը գտնվում է պարսպափակ  
տարածության մեջ, կիսափուլ այս պարիսպը թեև XVII դարի  
դործ եւ, բայց նրա պատերի մեջ հագցրած կան արձանագրված  
քարեր՝ 1088 թվականով: Պարսպին կից (ներսից) խուցերի և  
հյուրատների ավերակներ են (ալբոմ նկ. 24):

Ա. ՅԵԿԵՂԵՑԻ. — Առ մի մեծ շնչք և, 15 մ 84 ամ յերկարությամբ և 12 մ լայնությամբ, հավանաբար մինչև վերջ շշմնված, արբատաշ առթրապույն տուփից, զբսից քառակուսի ձև ունի, ներսի տարածությունը յերկու մայթերով բաժանված և յերկու մասի ներսի պատերի վրա կան շատ ականատներ, վորոնցից հատկապես հյալսիային պատի վրայիններն ամբողջավիճականդարդ են, Արեմոյան պատն ունի զեղեցիկ քանդակներ, Մուսաքան արևմտաքից և, վորի ճակատին կան թայտների, ճրեշտակների և արևի զեղեցիկ բարձրագանդակներ, նույն պատի հարավային մասում կամ մի հեծյալ մարդու քանդակ:

Բ. ԴԱՎԻԹԻ. — Կից և հիշյալ յեկեղեցուն՝ հարավից, մեծությունն է՝ 15 մ 84 ամ յերեկարություն և 10 մ 8 ամ լայնություն, ամբողջավիճակ վիզած է. Առում և միայն մի կամար և ներսում սյուների և նրանց հիմքի ու խոյակների մասերը, վորոնց վրա կան արձանագրություններ:

Գ. ԱԱՊԱՆԱՏՈՒՆ. — Կից և գավիթին՝ արևմելքից, գտնվում է կիսակործան մինակում, պատերի մասցած մասերը զեղաքանդակ զարդեր ունեն ու սիրուն կումարներ, Մուսաքը գավիթի միջից և, Հարավային պատի վրա (զբսից) կա մեծ արձանագրություն (ալրում, նկ. 25):

Դ. ԱՆՐԻ. — Կից քասորը կիլոմետրի շափ դեսի արևմուտք, բարի լանջին, գտնվում է մի բարձրաբվեսա հուշարձան (յեկեղեցի), Դմբերին ամբողջավիճակ թափվել և, ինչպես նաև թափվել են պատերի վորոշ մասերը, չուշարձանի ներսում, չորս անկյուններում կան մեկական միանարկ խորաններ, Մուսաքը արևմուտքից և կողներից բարձրացող վորմասոյունների վրա հանգչում ե դուրս ընկած մի կամար, վորը շնչքին. տալիս և վեհություն, Բոլոր պատուանների շրջանակները նույնական զեղաքանդակ են, Հուշարձանը շինված և սրբատաշ կարմրավուն տուփից, յերկարությունն և 10 մ 8 ամ և լայնությունը՝ 7 մ 92 ամ. Պատերին կան բազմաթիվ արձանագրություններ:

Ե. Ա. ՀՈՒԶԱՐԴԱՆԻ. — Հարավից կողած են յերկու մատուններ, վորոնք կիսավեր վիճակում են այժմ: Մատուքի արևմուտյան մուտքը շատ զեղեցիկ և յեղել և նմանեցրած յեկեղեցուն: Թե՛ յեկեղեցու և թե մատունների մեջն ու զուրսը թափված են փլված մասերի հարաբապետական բեկորներ (ալրում նկ. 26, 27, 28):

Դ. Ս. ԿԱՐԱՊԵՏ ԿԱՐԱԿՈՍ ՄԱՏՈՒՆԻ. — Այս մատուքը գտնվում

և Շավուց թառից՝ քառորդ կիլոմետր հեռու՝ գեղի հարավարեւելք, շրջապատված խիտ թփուռներով, Շինված և սրբատաշ քարերով՝ կտուրը թափված է, մեռմ և ընծի գլխի կամարը միայն Մուտքն արևմայան կողմից է։ Պատուհանների շրջանակները՝ գեղաքանզակ, Հարավում զրված և մի մեծ դեղնավուն գեղաքանզակ խաչքար-այդ կողմից մատուռը կանգնած և ուղղակի ժայռի բերանին Հյուսիսային պատմի ունի մեծ արձանագրություն՝ զրված ՈԿԲ (1213 թ.), վորից պարզվում է, թե մատուռը շինված և Սիբիր և Արմենի գերեզմանների վրա, իրենց յերեք աշակերտների կողմից։

Ա. ՀԱԻՇԱՐՑԱՆ-ԿՈԹՈՂ. — Մատուռից գեղի հյուսիս, 20—30 քայլի վրա, կանգնած և մի սիրուն կոթող. բարձրությունը 2 մ 88 ամ. և ըստությունը 1,75 մ. կոթողի արևմայան ճակատին ազուցված և կարմրավուն առաջաքարը մի սիրուն խաչքար։ Հյուսիսային կողմին ունի մեծ արձանագրություն, ըստ վորի հուշարձանը կանգնեցված է յերեք յեղայիշների գերեզմանների վրա։

Զ. ԿՈԹՈՂ. — Յեկեղեցուց գեղի արևմուտք, ըլլի գլխին կանգնած և մի քառանկյուն կոթողի ներքին մասը։ Հիմնված և յետաստիճան պատվանդանի վրա. այս կոթողի գլխին կանգնած և յեղնել խաչքար, վորն այժմ ընկած և պատվանդանի մոտ Խաչքարի ճակատին, շրջանակի մեջ քանդակված և Հիսուսի պատկերը, իսկ շրջանակի վրա՝ արձանագրություն՝ ԶԻՒ (1278 թվականի)։

#### 4. ԳԱԼԻՆԻ ՀԱԻՇԱՐՑԱՆՆԵՐԻ.

Ա. ԲԵՐԴ. — Դառնի դյուղը, վորի տակի անգնդախոր ձորում միանում են Ազատ գետի յերկու վատակները՝ Գեղարդի և Թեղվայրերը, Հայաստանի պատմական ամենահին շիներից և Գյուղի մոտ հագույն ժամանակներում շինվել եր մի ամուր բերդ, Ազատ գետի ձարավ յեղերգող թերակղղիածե յեռանկյունու վրա՝ գյուղի կողքին, Ռերդի յերկու կողմից բացվում են անգնդախոր ձորակներ, պատի նման ուղղաձիգ ժայռերով։ Այս կողմերից բերդը միանդամայն անառիկ ու ապահով է, վորովհետև ժայռերի բարձրությունը ձորից յերեք-չորս հարյուր մետրի յև համառման Յերբորդ մատչելի կողմն ամրացված և մի հասա պարսպով, վորի բեկորները, հատկապես մուաքինը, մինչեւ այժմ ել մոռմ են։ Մովսես Խորենացին բերդի շինությունը վերագրելով Տրդատ թագավորին, այն նկարագրում և հետեւալ խոսքերով. «Կատարէ Տրդա-

եւինուած ամրացին Դուռնոյ, զոր որձաբար և կափածոյ վիմօք, եւ-  
կարտպամ և կապարով մածուցեալ:

Այս բերդը շինված է մեր թվականությունից առաջ, բայց  
Տրդատ թագավորը նորոգել է այն և ներսում այլ շննչեր կա-  
ռուցել մեր թվականության առաջին դարի վերջերում՝ 80—100  
թվականներին:

Բերդի պարսպի ներքեւ, հին մասի քարերը սրբատաշ բա-  
րձրացից են, դրանք հնաց այն քարերն են, վորոնց ճիշտ նկարա-  
դրությունը տալիս է Խորենացին, իսկ վերևի մասերը ու տու-  
ֆարարից են. պարսպի այդ մասերը նետակա նորոգությունների  
ժամանակի շինվածներն են:

Բերդի ներսն այժմ վեր և ածված այդիների և արաների,  
սահայն տեղատեղ դեռ յերեւում են ավերակների թմրերը (ալբոմ՝  
նկ. 29),

Իր անառիկ զիրքի ու պատմական Հայաստանի մայրաքառ-  
տաքներին մոտ լինելու և նրանց արքունիքների համար ամառա-  
նոցի զեր կատարելու, միաժամանակ պիտական զորքի համար  
կարեսը զորանոց լինելու պատճառով, բերդի շուրջը գտնվող  
Գտոնի գյուղը մեծանում եր, և հին պատմագիրները գյուղաքա-  
զաք կամ ուղղակի քաղաք են անվանում այս Ներկա գյուղի  
արևմտյան կողմի արտերի ու այգիների մեջ փռված են հին  
գյուղատեղին ավերակները:

Թ. ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՏԱՅԱՐ.—Բերդի ներսում, ձորաբերանի մոտ  
թափված են բնկորները մի յեղակի հուշարձանի, վորն իր տե-  
սակի մեջ միտին և ամբողջ արևելքում: Այս փոքրիկ, միահարկ  
յերբեմնի կանգուն շննչը հեթանոս (վոչ քրիստոնյա) աստված-  
ներին նվիրված մի մեհյան և յեղել: Այս գեղանկար քարափի  
զիւին հին հայերը գոհեր են մատուցել զանազան կուռքերի, վո-  
րոնց բազիները (արձանները), իբրև իսկ ձեռքով շինած՝ շար-  
ված են յեղել այս գեղեցիկ շննչերի մեջ:

Այս աւանար—մհեյանը շինվել է մեր թվականության ըս-  
կըզրներին, 66—100 թվականների միջև:

Հոռմեյացիների և հին Իրանի միջն Հայաստանի տիրապե-  
տության համար մղվող դարավոր պայքարից հետո, կողմերը  
համաձայնության յեկան: Վար Իրանը Հայաստանի զանի հաս-  
մար, թեկնածու, կառաջադրի: Իսկ Հոռմը նրան կթագաղրի: և առա,  
թագավոր նշանակված ճրգապար: Ճրգապար: 66 թվին, մեկնում է Հոռմ և թա-  
գաղրվում Հոռմի կայսր Ներոնի կողմից: Տրդատը Հոռմից վերա-

գառնալով, վերաշինել և տալիս հոռմեյական լեզեռների կողմից պվերված Արտաշատը և կառուցել և տալիս Գառնիի հեթանոսական տաճարը:

Այս տաճարն իր նարտառավետություն և գեղարվեստական զլյամանք գծերով նույնաշահան արվեստի նմուշ է. բայց նոր գեղարվեստական նարդարանի մեջ մելք են նոր և սեղմական, նայկական արվեստի օտարերես։ Նաև կապիս իր բարձրաւայիս բանդակների մեջ նոր բնդգրեկի և հայ արվեստի սիրած խաղաղի և նույն բամբակները։

Տաճարի հիմքը յերկուստիճան է, փորի վրա բարձրանուած և մի բարձր պատվանդանն է. Այս պատվանդանի վրա կոնողնած և յեղել տաճար—մենանը՝ չորս կողմից շրջապատված սյունաշարքերով յեղերգող սրահակներով։ Պատվանդանը նրա համար և յեղել, վարպեսպի միահարկ շենքը բարձր և հանգիստավոր յերեաւ Շրջապատի սյուների թիվը 24 և. հյուսիսից և հարավից նայելիս յերեւմ և Ծ-ական սյուն և արևելքից ու արևմտաքից՝ Ծ-ական սյուն։ Այդ այսուները, շարպած լինելով սրահակների դրսի շրաթունքներին և հիմք ունենալով տաճարի պատվանդանը՝ իրենց խոյսկներով պահել են կուռքի ծայրերը։ Մածկը յեղել և փայտից՝ վրան կդմինդրով ծածկված, կենարունուած ունենալով յերգիկ՝ լուսավորության համար, քանի վար պատերի մեջ լուսաւութներ չունեն։

Տաճարի մուտքը հյուսիսային կողմից է, ինն աստիճանուներով բարձրանարդ պատվանդանի վրա, այնունետեւ սյուների արանքով մտել են սրահակը, վորտեղից միակ մաւաքը տանելիս և յեղել զնպի տաճարի ներսը։ Այդ աստիճանները, վորոնք շենքի ամբողջ յերկարությամբ են, իրենց ծայրերով ամփոփվում են գուրս ընկած պատով, վարոնց նակատին քանդակված են մեկական հսկաներ (տիտան), վորոնք ձեռքերով պահում են պատի գլմին յերբեմն զրված զռանեղանները (ալբոմ՝ նկ. 30)։

Տաճարի պատվանդանի խոշոր քարերը միացված են կրաշաղախով, յերկաթագամ են և տկապւրով մածուցեալք, ինչպես առում և նորենացին։

Այս յեղակի հուշարձանից այժմ կանգուն են միայն պատվանդանը և պատերից՝ փոքր մասեր. շենքի մասցած մասերը փլված և թափված են պատվանդանի շուրջը (ալբոմ՝ նկ. 31, 32)։

Ամբողջ շենքը շինված է տեղական գորշ վարձաքարի (բարդա) մեծամեծ կոսորներից. դրանցից ամենամեծը՝ հյուսիսային

կողմի սրահակի տուաստադի քանդակագարդ սալաքարը կըոռւմն  
4812 կիլոգրամ կամ 300 փուլք:

Անդադախոր ժայռերի զիսին, ոսխ բուսականությամբ շըր-  
ջապատճակած այս յերկու հաղար տարվա անցյալ ունեցող դարմա-  
նալի նուրը և դեղեցիկ քանդակագարդ բեկորներն այժմ խնամ-  
քով պահպառ և ուսումնասիրվում են (այսում՝ նկ. 33—41):

Այս դեղեցիկ հուշարձանը դեռ մինչև XVII դարի սկզբները կանգուն էր. փլման զիսավոր տոիմ հանդիսացավ քարերի արանք-  
ներում, յերկաթն կապիչների ծայրերը քարերին ամրացնելու  
տեղում, յեղած արճի և յերկութեւ կապիչների աստիճանաբար  
հափշտակումը, զորի հուշեանքով հուշարձանուր խարխլվեց և փլից:

1909 և 1910 թվերին ակագմեմիկոս Մառը պեղումներ կա-  
տարեց այս հուշարձանի շրջապատում և հոգի մեջ թաղված րե-  
կորները հանեց ու գասագորեց իրար մոտ: Խոկ 1934 թվին շնոր-  
քի կանգուն մասերը շաղախով ամրացվեցին, կանխելու համար  
հետագա ավերումները:

Գ. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ.—Դյուզի հարավային ծայրում, այգինե-  
րի մեջ կանգնած ե մի կիսավեր փոքր յեկեղեցի, վորու ըստ ար-  
ձանագրությունների, ո. Աստվածածին և կոչվելու իսկ այժմ գյու-  
ղացիները ո. Կարապիտ են անվանում: Յերկարությունն և 7 մ  
20 ոմ և բարությունը՝ 5 մ 76 ոմ: Արևելյան, հարավային և  
հյուսիսային պատերի մեջ, զրոխց, կան շատկան խորը նիշեր:  
Կտուրն ամրազովին թափված ե, նորյանպիս և պատերի վերին  
մասերը, Լավ են պահպանված, համեմատարար, արևելյան և հյու-  
սիսային պատերը Պատերի մեացած մասերի վրա կան կամարնե-  
րի և աղեղների շատ դեղեցիկ մնացորդներ: Ներսը և շրջապա-  
տում թափված են բազմաթիվ դեղաքանդակ բեկորներ: Շինված  
ե յեղել մոխրագույն սրբատաշ քարից: Տարտարապետական և  
քանդակագործական իր մանրամասնություններով այս փոքրիկ  
հուշարձանը շատ բարձրարժեք և պատկանում է Հայաստանի  
հնագույն, արժեքավոր շինությունների թվին: Հուշարձանի պա-  
տերին կան արձանագրություններ՝ Զե՞Դ (1315) և այլ թվական-  
ների: Հուշարձանի հյուսիսային կողմում, պատվանդանների վրա  
կանգնած են յերկու գեղաքանդակ մեծ խաչքարեր:

Գ. ՑԵՆՑԵՑԻ ՑԵՆՑ. ՄԱՏՈՒՐ. — Դյուզի հարավարապետական կող-  
մում գտնվում են, իրար կպած, մի յեկեղեցու և մատուրի ավե-  
րակներ: Այս հուշարձանը նորյանպիս Պատոնիի հին և արժեքավոր  
շինություններից ե: Ուսի արձանագրություն:

Բացի վերոհիշյալից, գյուղի շրջակայքում կան և լի մի քանի  
հին և արժեքավոր հուշարձանների ավերակներ, վորոնցից այժմ  
չառ քիչ բան և մնացել:

Ա. ԽԱՉՔԱՐԵՐ.— Գյուղամիջի զերեզմանատան մեջ կան մի  
քանի խաչքարեր՝ պատվանդանների վրա կանդնած։ Դրանցից  
մեկի վրա կա մեծ արձանագրություն՝ Զե (1281) թվականի։ Մի  
ուրիշի վրա կա 1233 թվականը կրող արձանագրություն, իսկ  
յերրորդի վրա՝ գույզ Խոչտանների քանդակներ։

Դյուզի հյուսիսարեմույան կողմում բարձրանում և մի մեծ  
բլուր, վորի վրա նույնական կան արձանագրված և դեղաքանդակ  
հին աւապանաքարեր ու խաչքարեր։

---

# ИСТОРИЧЕСКИЕ ПАМЯТНИКИ ГАРНИ—ГЕГАРД

## I. ИЗ ПРОШЛОГО ИСТОРИИ ГЕГАРДАДЗОРА.

Гегардадзор в древности составлял часть Мазазского района Арагатской области. Мазазский район занимал всю долину реки Азат (Гарни-чай) до впадения его в Аракс. По естественным особенностям, Мазазский район делится на две части: горную и низменную. В низменной части были расположены главные города Армении: Артават и Дили. Горная часть с Гегардадзором служила дачным местом для этих городов. Горная часть Мазазского района в древности принадлежала феодалам, так называемым Мазазнунам, затем Захаридам и, наконец, в XIII веке — Прошьянам.

## II. ДОРОГИ ВЕДУЩИЕ К ПАМЯТНИКАМ ГЕГАРДАДЗОРА.

Все дороги ведущие к памятникам Гегардадзора сходятся в Гарни и оттуда снова расходятся в разных направлениях к памятникам.

*Первая дорога* наилучшая для автомашин. Из Еревана автомашины по шоссе доходят до Канакира и оттуда проселочной дорогой через селения Аван, Джрвеж и Вохчаберд попадают в Гарни. Отсюда, дорога ведущая к селению Артиз на верху селения Гохт сворачивает и доходит прямо до Гегарда.

Этот путь до Гарни составляет 35 километров, а до Гегарда — 42.

Путешествуя пешком или же на лошади, из Еревана надо подняться в Норк и около селения Джрвеж попасть

на основную дорогу. От Гарни же, чтобы попасть в Гегард, надо пройти через селение Гохт. Этим путем дорога сокращается на 7—8 километров.

*Вторая дорога* начинается от вокзала. Мимо озера Тохмакан дорога идет до сел. Шорахпюр и около сел. Авдалар она соединяется с первой дорогой. Эта дорога для пешеходов и едущих на арбе самая короткая. Автомашины этой дорогой не ходят. По этой дороге до Гарни 24—25 километров.

*Третий путь* идет по Камарлинскому шоссе до селения Агбаш, откуда, перейдя в проселочную дорогу, доходит до Гарни. Эта дорога удобна для автомашин и экипажей, но длиннее и первой и второй дороги.

*Дорога на Авуц-Тар.* Из Гарни по тропинке надо спуститься прямо к речке Гегард, перейти мост и, иди среди кустов и деревьев, достигнуть памятников.

Из Авуц-Тар можно, спустившись в ущелье, пройти прямо в Гегард. В этом случае нужно спуститься по направлению к сел. Гохт или же итти вверх до сел. Алимардан и спуститься прямо на Гегард. Эта дорога возможна только для пешеходов.

От Гарни до Авуц-Тар 4—5 километров и оттуда до Гегарда приблизительно столько-же.

*Дорога ведущая к вишапам.* К вишапам ведут две дороги. По одной можно прямо из Гегарда подняться по берегу реки до озера Тохмакан и по другой надо итти по Гарни-Гегардской дороге, затем свернуть на дорогу в сел. Артиз. Пройдя последнее и, значительно поднявшись по дороге к Баязету, свернуть по направлению к кочевке Каспаркенд и, пересекши речку Гегард, итти к озеру Тохмакан и Аджага-юрту, где и лежат вишапы. Эта дорога удобна для пешехода и всадника. Дорога через Артиз более длинна.

### III. ПАМЯТНИКИ ГЕГАРДАДЗОРА.

#### А. ВИШАПЫ.

Эти памятники принадлежат к эпохе родового строя Армении и имеют древность в 3—4 тысячелетия до нашей эры. Они служили божествами воды родового общества.

Эти вишапы находятся по берегам озера Тохмакан и Ажлагаг-юрте и полях Имирзека, где сосредоточена речка Гегард. Отсюда родовые общины Мазазского района получали для орошения воду.

У каждого родового канала стояло его божество воды — вишап с изображением своего родовогоtotема. На берегах же Томаханского озера, принадлежащего всему обществу, стояли боги — вишапы многочисленных родов.

